բնակութեանս, այսպիսի ևս մասնաւոր աշխարհն մեր այսինքն բնութիւնս մարդոյ երբեմն 'ի ջերմութենէ արեան և կամ 'ի թեժութենէ մաղցին և կամ 'ի սառնութենէ բլղամին և՝ այլն, ժամանակ ընդ ժամանակս կենաց մերոց 'ի յերեսս երկրի փոխարկի բնութիւնս մեր տղայութենէ երիտասարդութիւն, և 'ի երիտասարդութենէ կատարելապէս հասակ և 'ի նմանէ ծերութիւն և այլն, նաև յաւելի քանզայս 'ի բերմանէ ժամանակին 'ի պատճառէ կերակրոց և ցանկութենէ սրտից և թշուառութեանց աղքատութենէ և կամ հպարտութենէ հարստութեան և այլն, շարժի բնութիւնս մեր և փոփոխի Օրաւուր և պահէ մեզ 'ի միջի անվախճան աշխատանաց՝ ես շինելով տուն որդին իմ քակելով և 'ի տեղի տնկելով այգի, թոռն իմ քակելով և շինելով շտեմարան, մինն սիրելով հաւաքէ բարեկամք, միւսն նախատելով ցրուէ, մինն գթանալով ողորմի և գարմանէ, միւսն բարկանալով խոցէ և վիրաւորէ, մինն աշխատէ և բարեկամն իւր բարեխօս ձգէ ստանալ երիվար, միւսն նոյն երիվար ձրի բաշխէ այլոց, մինն մուծանէ զինքն 'ի պարկեշտութիւն լինի կրօնաւոր, միւսն դեղ առնու որ տացէ զօրութիւն ստամօքին յաճախ ուտելոյ, և այլ բազում նման սոցայ գոյ շարժմուն մէջ բնութեան մերոյ, և է այնքան բնական որ ամենեքեան ընթերցողք սմայ բարեպէս ունիք